ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբերի 2025 թվականի N 111-Ա

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու թիվ 8 նստաշրջանի առաջին՝ 2025 թվականի սեպտեմբերի 12-ի հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 12-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Եղեգնաձոր համայնքի 2025 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

3) Եղեգնաձոր համայնքի համայնքային սոցիալական ծրագրի շրջանակներում տրամադրվող աջակցությունը հաստատելու մասին:

4) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 120-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

5) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 122-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

6) Եղեգնաձոր համայնքի սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցներից վարձակալության տրամադրելու մասին:

7) Տեղական վճարի գծով արտոնություն սահմանելու մասին:

8) «Մալիշկա ռեսուրսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի վարչական տարածքում նախատեսվող գործունեությանը համաձայնություն տրամադրելու մասին:

9) Անշարժ գույքի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին:

10) «Եղեգնաձոր ՖԱ» սպորտային և մշակութային հասարակական կազմակերպությանը նվիրատվություն կատարելու մասին:

11) Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը որոշելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 12
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբերի 2025 թվականի N 112-Ն

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ, 33-րդ հոդվածի 4-րդ մասերի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի հունվարի 21-ի թիվ 02-Ն որոշմամբ հաստատված բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Եկամտային մասում՝

ա. օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի վարչական բյուջե մուտքագրվող այլ եկամուտներ տողին (տող 1393) ավելացնել 16 968 500 (տասնվեց միլիոն ինը հարյուր վաթսունութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ,

բ. համայնքային սեփականություն համարվող հողի օտարումից գոյացած 31 520 000 (երեսունմեկ միլիոն հինգ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ գումարը ներառել համայնքային բյուջե՝ հողի օտարումից մուտքեր տողին (տող 6410).

2) Ծախսային մասում ավելացնել՝

ա) գործառնական դասակարգման բաժին 05 խումբ 06 դաս 01 (շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4511 (սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին) հոդվածին՝ 6 150 000 (վեց միլիոն հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ «Եղեգնաձորի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ին շրջակա միջավայրի պահպանման և կանաչապատման լրացուցիչ աշխատանքների իրականացման ֆինանսավորման համար,

բ) գործառնական դասակարգման բաժին 04 խումբ 05 դաս 01 (ճանապարհային տրանսպորտ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4269 (հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածին՝ 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամ՝ ճանապարհային նշանների և արհեստական անհարթությունների ձեռքբերման, 4251 (շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածին՝ 1 200 000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ՝ նշագծման աշխատանների ֆինանսավորման համար,

գ) գործառնական դասակարգման բաժին 04 խումբ 02 դաս 04 (ոռոգում) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4251 (շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածին 2 500 000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ Եղեգնաձոր համայնքի ոռոգման ցանցերի ընթացիկ վերանորոգման աշխատանքների ֆինանսավորման համար,

դ) գործառնական դասակարգման բաժին 08 խումբ 02 դաս 04 (այլ մշակութային կազմակերպություններ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4251 (շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածին 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ Եղեգնաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի գրադարանի ընթացիկ նորոգման աշխատանքների ֆինանսավորման համար,

ե) գործառնական դասակարգման բաժին 09 խումբ 01 դաս 01 (նախադպրոցական կրթություն) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածին՝ 900 000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամ՝ «Եղեգնաձորի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի խոհանոցային կահույքի ձեռքբերման համար, 1.5-5 տարեկան կրթության և զարգացման առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների նախադպրոցական կրթության ապահովման ֆինանսավորում՝ «Եղեգնաձորի թիվ 2 մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ հաճախող թվով 6 (վեց) երեխաների համար՝ 229 625 (երկու հարյուր քսանինը հազար վեց հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ, «Եղեգնաձորի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ հաճախող թվով 12 (տասներկու) երեխաների համար՝ 459 250 (չորս հարյուր հիսունինը հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ, Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրի «Արևիկ» մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ հաճախող թվով 6 (վեց) երեխաների համար՝ 229 625 (երկու հարյուր քսանինը հազար վեց հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ,

զ) գործառնական դասակարգման բաժին 01 խումբ 06 դաս 01 (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4241 (մասնագիտական ծառայություններ) հոդվածին՝ 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի շուկայական գնահատման համար, 5134 (նախագծահետազոտական ծախսեր) հոդվածին 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ՝ Եղեգնաձոր համայնքում գազաֆիկացման աշխատանքների և բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման, 5113 (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածին՝ 10 000 000 (տաս միլիոն) ՀՀ դրամ՝ մասնակցային բյուջետավորման գործընթացի արդյունքում հաղթող ճանաչված ծրագրի (Գլաձոր բնակավայրի մշակույթի տան նախասրահի վերանորոգում) և «Եղեգնաձորի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի վերանորոգման աշխատանքների թիվ 2 կատարողականի ֆինանսավորման համար,

է) գործառնական դասակարգման բաժին 06 խումբ 04 դաս 01 (արտաքին լուսավորություն) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 5112 (շենքերի և

շինությունների կառուցում) հոդվածին՝ 17 500 000 (տասնյոթ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ ՀՀ Վայոց ձորի մարզի, Եղեգնաձոր համայնքի Կամոյի, Չալաբյան, Մշեցու, Թամանցիներ և Չարենց փողոցների լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների ֆինանսավորման և մասնակցային բյուջետավորման գործընթացի արդյունքում հաղթող ճանաչված ծրագրի ֆինանսավորման համար (Գետափի լուսավորություն), 5134 (նախագծահետազոտական ծախսեր) հոդվածին՝ 2 520 000 (երկու միլիոն հինգ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության ծառայությունների մատուցման ֆինանսավորման համար,

ը) գործառնական դասակարգման բաժին 08 խումբ 01 դաս 01 (մարզական միջոցառումներ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4819 (նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին) հոդվածին՝ 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ «Եղեգնաձոր ՖԱ» սպորտային և մշակութային հասարակական կազմակերպությանը ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար,

թ) գործառնական դասակարգման բաժին 01 խումբ 01 դաս 01 (օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում) ոլորտի տնտեսագիտական դասակարգման՝ 4237 (ներկայացուցչական ծախսեր) հոդվածին 800 000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, 5122 (վարչական սարքավորումներ) հոդվածին 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ գրասենյակային գույքի ձեռքբերման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. սեպտեմբերի 12
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբերի 2025 թվականի N 113-Ա

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 20-ի թիվ 83-Լ որոշմամբ հաստատված համայնքային սոցիալական ծրագիրը (X գլուխ, 3-րդ պարբերություն) և ծրագրի շրջանակներում տրամադրվող աջակցության գործընթացն ապահովող հանձնաժողովի եզրակացությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի համայնքային սոցիալական ծրագրի շրջանակներում տրամադրվող աջակցությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՒԶԻԿ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 12
ք. Եղեգնաձոր

Հավելված

Վայոց ձորի մարզի
Եղեգնաձորի համայնքի ավագանու
2025 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 113-Ա որոշման

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՓՆ՝ ԸՍՏ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ

ՀՀ	Ազգանուն, անուն	Բնակավայր	Հասցե	Տրամադրվող հատուցման չափը ՀՀ դրամով արտահայտված
1	Բաբայան Նարեկ	Եղեգնաձոր	Ալավերդյան փողոց, 7	175 000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբերի 2025 թվականի N 114-Ա

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 120-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի՝ «2025 թվականի համար Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 120-Ա որոշմամբ հաստատված հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի սեպտեմբերի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 12
ք. Եղեգնաձոր

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի համայնքի ավագանու
2025 թվականի մայիսի 12-ի թիվ 114-Ա որոշման

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի համայնքի ավագանու
2024 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 120-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

1. Աշխատակիցների քանակը՝ 73
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀՀ դրամ

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար)	Հավելավճարը	Աշխատավարձի չափը
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ					
1	Համայնքի ղեկավար	1	591000		591000
2	Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ	1	480000		480000
3	Համայնքի ղեկավարի տեղակալ	2	305000		610000
	Ընդամենը	**4**	**1376000**		**1681000**
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ					
4	Համայնքի ղեկավարի խորհրդական	1	300000		300000
5	Համայնքի ղեկավարի առաջին տեղակալի օգնական	1	300000		300000
6	«Դավիթ Հարությունյան» կուսակցությունների դաշինք խմբակցության փորձագետ	1	110000		110000
	Ընդամենը	***3***	***710000***		***710000***
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ					
7	Մալիշկա բնակավայրի վարչական ղեկավար	1	360000		360000
8	Գլաձոր բնակավայրի վարչական ղեկավար	1	328000		328000
9	Գետափ բնակավայրի վարչական ղեկավար	1	314000		314000
10	Վերնաշեն բնակավայրի վարչական ղեկավար	1	300000		300000
	Ընդամենը	***4***	***1302000***		***1302000***
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ					
11	***Աշխատակազմի քարտուղար***	***1***	***432000***		***432000***
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ					
12	*Բաժնի պետ*	1	360000		360000
13	*Գլխավոր մասնագետ*	2	306000		612000
14	*Առաջատար մասնագետ*	2	222000		444000
	Ընդամենը	***5***	***888000***		***1416000***
ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԲԱԺԻՆ					
15	*Բաժնի պետ*	1	360000		360000
16	*Գլխավոր մասնագետ*	2	306000		612000
17	*Առաջատար մասնագետ*	3	222000		666000
18	*Առաջին կարգի մասնագետ*	1	180000		180000

	Ընդամենը	***7***	***1068000***		***1818000***
	ԱՇԽԱՏԱԿԱԶՄ (ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՉՆԵՐԱՌՎԱԾ ՊԱՇՏՈՆՆԵՐ)				
19	Գլխավոր մասնագետ	5	306000		1530000
20	Գլխավոր մասնագետ (պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներ իրականացնող մասնագետ)	1	306000		306000
21	Գլխավոր մասնագետ (ՔԿԱԳ սպասարկման կենտրոնի մասնագետ)	1	166583		166583
22	Առաջատար մասնագետ	7	222000		1554000
23	Առաջին կարգի մասնագետ	7	180000		1260000
	Ընդամենը	***21***	***1180583***		***4816583***
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
24	Ցանցային ադմինիստրատոր	1	220000		220000
25	Երեխաների և կանանց իրավունքների պաշտպանության հիմնահարցերի կազմակերպիչ	1	182600		182600
26	Մշակութային կազմակերպիչ (Մալիշկա)	1	182600		182600
27	Մշակութային կազմակերպիչ (Գլաձոր)	1	182600		182600
28	Մշակութային կազմակերպիչ (Գետափ)	1	182600		182600
29	Գրադարանավար	1	146100		146100
30	Մշակույթի ոլորտի համակարգող	0.5	190680		95340
31	Սպորտի կազմակերպիչ (Գետափ և Գլաձոր)	1	130000		130000
32	Գործավար-օպերատոր	1	185000		185000
33	Տնտեսվար	2	150000		300000
34	Գործավար	1	165000		165000
35	«Դավիթ Հարությունյան» կուսակցությունների դաշինք խմբակցության գործավար	0.5	110000		55000
36	«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության գործավար	0.5	110000		55000
37	«Ապրելու երկիր» խմբակցության գործավար	0.5	110000		55000
38	Հավաքարար (Եղեգնաձոր)	1	130000		130000
39	Հավաքարար (Գլաձոր մշակույթի տուն)	0.5	124000		62000
40	Հավաքարար (Գլաձոր)	0.5	124000		62000
41	Հավաքարար (Գետափ)	1	104000		104000
42	Հավաքարար (Մալիշկա)	1	104000		104000
43	Հավաքարար (Վերնաշեն)	1	104000		104000
44	Վարորդ	1	160000		160000
45	Պահակ	1	104000		104000
	Ընդամենը	***20***	***3201180***		***2966840***
	ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ) ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
46	Անասնաբույժ /Եղեգնաձոր/	1	160000		160000
47	Անասնաբույժ	4	120000		480000
	Ընդամենը	***5***	***280000***		***640000***
	ԸՆԴԱՄԵՆԸ	***70***	***10437763***		***15782423***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբերի 2025 թվականի N 115-Ա

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 122-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի՝ «2025 թվականի համար Եղեգնաձոր համայնքի ենթակայությամբ գործող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 122-Ա որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի սեպտեմբերի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆՏԻՆ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻԿ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 12
ք. Եղեգնաձոր

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի ավագանու
2025 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 115-Ա որոշման

Հավելված թիվ 1
Հայաստանի Հանրապետության
Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի ավագանու
2024 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 122-Ա որոշման

«ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների քանակը՝ 34

2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

<<	Պաշտոնը	Աշխատած ամիսները	Հաստիքային միավորը	Դրույքաչափը	Ընդամենը
			1. Վարչական աշխատողներ		
1	Տնօրեն	12	1	260,000	3,120,000
2	Հաշվապահ	12	1	165,000	1,980,000
3	Ինժեներ-մեխանիկ	12	1	250,000	3,000,000
4	Գործավար	12	1	125,000	1,500,000
5	Տեսուչ աղբահանության	12	1	150,000	1,800,000
6	Օպերատոր-հաշվառիչ	12	1	125,000	1,500,000
Ընդամենը			**6**	**1075000**	**12,900,000**
			2. Կանաչապատ տարածքների պահպանություն իրականացնող աշխատողներ		
7	Տեղամասի պետ	12	1	220,000	2,640,000
8	Բանվոր/մշտական	12	9	200,000	21,600,000
9	Վարորդ	12	1	200,000	2,400,000
10	Բանվոր	6	1	200,000	1,200,000
11	Բանվոր բնակավայր (Գետափ,Գլաձոր,Վերնաշեն)	12	2.25	200,000	5,400,000
12	Բանվոր Մալիշկա բնակավայր	12	1.5	200,000	3,600,000
13	Ջրբաշխիչ	12	4	200,000	9,600,000
14	Պահակ -բանվոր	12	1	200,000	2,400,000
Ընդամենը			**20.75**	**1620000**	**48,840,000**
			3. Գերազմանատան պահպանություն իրականացնող աշխատող		
15	Պահակ	12	1	100,000	1,200,000
Ընդամենը			**1**	**100000**	**1200000**
			4. Ավտոպարկ		
16	Վարորդ էքսկավատոր	**12**	**1**	220000	2,640,000
17	Վարորդ (ավտոբուս)	12	1	200000	2,400,000
18	Վարորդ (ուազ)	12	1	200000	2,400,000
19	Էլեկտրիկ	12	2	140,000	3,360,000
Ընդամենը			**5**	**760,000**	**10,800,000**
Ընդամենը			***32.75***	***3,555,000***	***73,740,000***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբերի 2025 թվականի N 116-Ա

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերով, քննարկելով Ջերմուկ համայնքի ղեկավարի 2025 թվականի օգոստոսի 28-ի N 923 և «ԷԿՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի տնօրենի սույն թվականի սեպտեմբերի 1-ի գրությունները, համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 606-628 հոդվածների.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի սեփականություն հանդիսացող՝

1) GAZ KO-440-2 (GAZ-3309) մակնիշի, 437 CG 61 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը (աղբատար) մեկ տարի ժամկետով վարձակալության տրամադրել «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին,

2) GAZ KO-440 N (GAZ-C41R13) մակնիշի, 435 CG 61 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը (աղբատար) մեկ տարի ժամկետով վարձակալության տրամադրել «ԷԿՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին:

2. Սույն որոշման առաջին կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված տրանսպորտային միջոցներից յուրաքանչյուրի վարձակալության համար ամսական վարձավճարը սահմանել՝ 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի և «ԷԿՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի հետ կնքել գույքի վարձակալության պայմանագիր:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 12
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբերի 2025 թվականի N 117-Ա

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի (բնակավայրերի) նախադպրոցական և արտադպրոցական հաստատություններ հաճախող՝ Արցախյան 2-րդ պատերազմում զոհված կամ անհայտ կորած, ինչպես նաև՝ մարտական գործողություններին մասնակցած զինծառայողների ընտանիքների անդամների տեղական վճարի (վարձավճար, ծնողական վճար) նկատմամբ սահմանել արտոնություն՝ զրոյական դրույքաչափ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի սեպտեմբերի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՒԶԱՆ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 12
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբերի 2025 թվականի N 118-Ա

«ՄԱԼԻՇԿԱ ՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱԼԻՇԿԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջով, հիմք ընդունելով 2025 թվականի օգոստոսի 20-ին Մալիշկա բնակավայրում անցկացված հանրային լսման արդյունքները.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն՝ «Մալիշկա ռեսուրսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի վարչական տարածքում նախատեսվող գործունեությանը, համաձայն որի նախատեսվում է Մալիշկա բնակավայրում Սպիտակասարի կրաքարերի հանքավայրի շահագործում, օգտակար հանածոների արդյունահանում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. սեպտեմբերի 12
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբերի 2025 թվականի N 119-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերով, 102-րդ հոդվածի 4-րդ մասով, հիմք ընդունելով Գետափ համայնքի ղեկավարի և քաղաքացի Հասմիկ Արշակի Նազարյանի միջև 2010 թվականի օգոստոսի 10-ին կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագրի 7.1-ին կետը և Հասմիկ Նազարյանի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Երկարաձգել Գետափ համայնքի ղեկավարի և քաղաքացի Հասմիկ Արշակի Նազարյանի միջև 2010 թվականի օգոստոսի 10-ին կնքված անշարժ գույքի (կադաստրային ծածկագիր՝ 10-014-0056-0051, գյուղատնտեսական նշանակության 0.074 հա վարելահող) վարձակալության պայմանագրի ժամկետը 10 (տասը) տարի ժամկետով՝ վարձավճարը սահմանելով՝ 7400 (յոթ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ քաղաքացի Հասմիկ Արշակի Նազարյանի հետ կնքել անշարժ գույքի վարձակալության պայմանագիր նոր ժամկետով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ

ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 12
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբերի 2025 թվականի N 120-Ա

«ԵՂԵԳՆԱՁՈՐ ՖԱ» ՍՊՈՐՏԱՅԻՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 42-րդ կետերով, քննարկելով «Եղեգնաձոր ՖԱ» սպորտային և մշակութային հասարակական կազմակերպության նախագահի գրությունը, համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-596 հոդվածների.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «Եղեգնաձոր ՖԱ» սպորտային և մշակութային հասարակական կազմակերպությանը, կանոնադրական նպատակներով օգտագործելու նպատակով, կատարել 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի նվիրատվություն՝ Եղեգնաձոր համայնքի 2025 թվականի բյուջեի մարզական միջոցառումներ (բաժին 08 խումբ 01 դաս 01) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4819 (նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին) հոդվածից:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ «Եղեգնաձոր ՖԱ» սպորտային և մշակութային հասարակական կազմակերպության հետ կնքել դրամական միջոցների նվիրատվության պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. սեպտեմբերի 12
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբերի 2025 թվականի N 121-Ա

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը որոշել՝ 2025 թվականի հոկտեմբերի 24-ը, ժամը՝ 18:30-ը, նիստի անցկացման վայրը՝ Եղեգնաձորի համայնքապետարան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՒԶԻԿ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2025 թ. սեպտեմբերի 12
ք. Եղեգնաձոր